Լիլիթ Մելիքյան

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Բանալի բառեր-Հրովարտակ, հոգևոր իշխանություն, վիրահայոց թեմ, Սանահինի վանք

Վիրահայոց թեմի պատմությունը ընդունված է համարել XII-XIII դարերից[1], երբ սկզբնաղբյուրներում հանդիպում են թեմական առաջնորդների մասին առաջին վկայությունները[2]: Սակայն ինքնըստինքյան հասկանալի է՝ Վրաստանում ապրող հայերի համար առանձին թեմի ստեղծումը չէր կարող չունենալ իր նախապատմությունը, այն երկարատև նախապատրաստական ժամանակաշրջանը, որի ընթացքում ստվարանալու էր հայ բնակչությունը հարևան երկրում: Ակնհայտ է նաև՝ թեմի կազմավորման համար անհրաժեշտ էր ելակետային տարածք, որի ընդարձակմամբ էլ նախադրյալներ էին առաջ գալու տեղական բնակչության հոգևոր առումով առանձնացման համար: Մյուս կողմից՝ պետք է թեմն ունենար հոգևոր կենտրոններ, բազմամարդ հոգևորականություն, որոնք էլ բավարարելու էին հավատացյալների կարիքներին: Այս նկատառումների լույսի ներքո առանձնահատուկ ուշադրության է արժանի թեմի ստեղծման մեկնակետի հարցի պարզաբանումը, որը և թույլ կտա հետևելու թեմի կազմավորման ողջ ընթացքին: Հետևաբար չենք կարող ևս մեկ անգամ քննության նյութ չդարձնել վիրահայոց թեմի սկզբնավորման տեսանկյունից բացառիկ սկզբնաղբյուրներից մեկը, որի ուսումնասիրությունը հնարավորություն կարող է ընձեռել մասամբ գոնե պատասխան տալու վերևում նշված հարցադրումներին:

Մինչև այսօր հետազոտողների կողմից Հայոց Սմբատ Բ Տիեզերակալ (977-989) թագավորի 979 թ. արձակած հրովարտակը դիտվել է որպես նորաստեղծ քաղաքական կազմավորման և նրա կառավարչի իրավունքների ճանաչման, ինչպես նաև աշխարհիկ և հոգևոր իշխանությունների վարչատարածքային սահմանները համապատասխանեցնելու փորձ[3]: Այնինչ այս հրովարտակի ուսումնասիրումը վեր է հանում նրա՝ Սանահնի վանքի և Վիրահայոց թեմի նախապատմության հարցերի լուսաբանման համար արժեքավոր սկզբնաղբյուր լինելու ոչ երկրորդական իրողությունը:

Հարկ ենք համարում մեջբերել հրովարտակն ամբողջությամբ.

«Կամաւք ամենազաւրին Աստուծոյ Հաւր եւ Որդւոյ եւ սուրբ Հոգւոյն, ես՝ Սմբատ Բագրատունի թագաւոր Հայոց, թոռն տիեզերակալ եւ մեծ թագաւորին Սմբատայ, որդւոյ[4] թագաւորին Աշոտոյ Ողորմածն կոչեցելոյ, եկի ի տեսութիւն սուրբ ուխտիս Սանահնիս, զոր շինեալ էր թագաւորն Աշոտ եւ Խոսրովանոյշ թագուհին՝ հայրն եւ մայրն իմ: Եւ տեսի, զի աստուածաշէն եւ թագաւորաշէն էր, վասն որոյ եւ սիրեցի եւ սիրոյ նշան արարեալ՝ հաստատեցի զսա աթոռ եպիսկոպուսութեան եւ սահմանեցի զվիճակ Սուրբ Աստուածածնիս եւ սուրբ հայրս վանանց զԵսայի ետու առնել եպիսկոպոս մեծի հայրա-*

---

[1] Տե՛ս «Հայ սփյուռք հանրագիտարան», Ե., 2003, էջ 545: «Գավազանագիրք Վրաստանի հայոց թեմի», http://armenianchurch.ge/hy/the-diocese/historyy (29.03.2017):

2 Տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԸ դդ.» , աշխատասիրությամբ Ա.Մաթևոսյանի, Ե., 1988, էջ 206-207: Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, Էջմիածին, 2009, էջ 105: Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Ե., 1961, էջ 98: Յովհաննես Երզնկացի, Մատենագրություն, հ. Ա, Ե., 2013, էջ 233:

[3] Տե՛ս Մովսէսեան Ղ., Լոռիի Կիւրիկեան թագաւորներու պատմութիւնը, Վիեննա, 1923: Մաթևոսյան Ռ., Լոռվա թագավորության կազմավորման պատմությունից, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1976, թ. 3, էջ 86-95: Շահնազարյան Ա., Տաշիր-Զորագետի Կյուրիկյան թագավորության առաջացումն ու հզորացումը, «ՊԲՀ», 2009, 2-3, էջ 225-233:

* Ի դեպ, այս հրովարտակը ևս մի վկայություն է, որ «տիեզերակալ» տիտղոսը առաջինը կրել է ՍմբատԱ թագավորը, տե՛ս Հ.Մարգարյան, Բագրատունի թագավորների «Տիեզերակալ» տիտղոսը, «Պատմության հարցեր», 2005, հ. 6, էջ 98-111:

[4] Նշենք, որ բնագրի տրամաբանությունից ելնելով՝ «որդւոյ»-ի փոխարեն պետք է լիներ «որդի», այդ կերպ արձանագրությունում տրված տոհմագրությունը լիովին համապատասխան կդառնար Բագրատունիների իրական ծննդաբանությանը:

պետին Հայոց Խաչկայ եւ անդառնալի հրամանաւ մերով եւ գրով ետու վիճակ եւ երկիրս զայս Սանահնիս զամենայն երկիրն Տաշրաց՝ զՎերին և զՆերքին, մինչ ի լեառն՝ Բազում, յայսկոյս եւ յանկոյս, մինչեւ ի սահմանս Գուգարաց աշխարհին եւ մինչ ի սահմանս Տփխեաց եւ Վրաց, եւ ի սահմանս Նիգ գաւառի եւ մինչեւ ի սահմանս Կայենոյ, եւ զսահմանս Ծաղկոցաց, մինչ ի սահմանս Տան Շիրակայ:

*Ես՝ Սմբատ թագաւոր իմ թագաւորական իշխանութեամբն եւ կաթուղիկոսաց **հրամանաւքն զաթոռս զայս եւ զվիճակս հաստատեցի ի Սանահնիս սուրբ Աստուածածնիս,** որ էր գերեզմանատուն նախնեաց մերոց, վասն յիշատակի հաւր իմոյ եւ մաւր՝ թագաւորին Աշոտոյ եւ թագուհւոյն Խոսրովնուշին, ինձ՝ կենաց եւ յետ մահու ի զարդ սուրբ Աստուածածնիս, որպէս զհայրն իմ եւ զմայրն նորոգել էին եւ զարդարեալ զարդարանաւք եւ յոլով գեաւղորէիւք եւ հայրենեօք, սարով եւ ձորով:*

Եւ արդ, եթե ոք իմ հրամանացս եւ տուեալ սիգիլիս հակառակի եւ կտրէ եւ խափանել ջանայ ի թագաւորաց կամ իշխանաց եւ ի կաթուղիկոսաց զիմ հաստատեալ վիճակի՝ թագաւորին Հայոց Սմբատայ, երեք հարիւր տասն եւ ութ հայրապետացն նզովեալ եղիցի:

Գրեցաւ ի թուականին Հայոց չորս հարիւր քսան եւ ութ (979 թ.)»[1]*:*

Այսպիսով՝ Սմբատ Բ-ն հայտնում է, որ այցելության գալով Սանահին՝ այստեղ հաստատում է եպիսկոպոսական աթոռ և ընդարձակ վիճակ շնորհում վանքին: Տեղին է նշել, որ Սանահնի եպիսկոպոսական աթոռի վերաբերյալ ավելի վաղ հիշատակություն է պահպանվել 972 թ. Սանահնի վանքի քարտուղար Սիմեոն վանականի հիշատակարանում[2]: Սմբատ Բ-ի հրովարտակի և Սիմեոն վանականի հիշատակարանի համադրությունը թույլ է տալիս կատարել որոշ պարզաբանումներ վանքում եպիսկոպոսական աթոռ հաստատելու տարեթվի վերաբերյալ: Սիմեոն վանականը՝ որպես ականատես, արժեքավոր տեղեկություններ է հայտնում Սանահնի վանքի գլխավոր եկեղեցու՝ Ամենափրկչի կառուցման ժամանակաշրջանի, առաջին առաջնորդների՝ Գրիգորի և նրան հաջորդած Պոլիկարպոս եպիսկոպոսների մասին, որոնք Կ. Ղաֆադարյանի ճշգրտմամբ Սանահնի առաջնորդներ են եղել համապատասխանաբար 966-970 և 970-972 թթ .[3]: Ուշագրավ է, որ Գրիգոր եպիսկոպոսը հիշատակվում է «յեպիսկոպոսութեան մերումս նահանգի (Գուգարք) գաւառիս Տաշիր»[4] ձևով: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ Սանահնի եպիսկոպոսարանը հիմնադրվել է 979 թ.–ից առաջ և իր մեջ ամփոփել է միայն Տաշիր գավառը: Ըստ այդմ՝ պարզ է դառնում, որ Սմբատ Բ-ն իր հրովարտակով ոչ թե Սանահինը դարձնում է եպիսկոպոսանիստ, այլ վերահաստատում է կարգավիճակը՝ շնորհելով նրան ավելի ընդարձակ վիճակ:

Ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ մինչև 979 թ. Սանահնում եպիսկոպոսանիստ էր Սբ. Աստվածածին եկեղեցին, որը աղբյուրներում հիշատակվում է նաև «կաթողիկե» ձևով[5]: Հրովարտակում Սմբատ Բ-ն հայտնում է, որ *«եկի ի տեսութիւն սուրբ ուխտիս Սանահնիս»*, որը կառուցել են իր հայր Աշոտ Գ Ողորմածը (953-977) և իր մայր Խոսրովանույշ թագուհին: Սբ. Աստվածածին եկեղեցին համարելով աստվածաշեն և թագավորաշեն՝ Սմբատ Բ-ն հրովարտակի վերջում նշում է, որ այն նորոգվել է իր հոր և մոր կողմից:

Սանահնի «Քյոթուկ»-ում պահպանված մի տեղեկությունից հայտնի է, որ Սբ. Աստվածածին եկեղեցին կառուցվել է Աբաս թագավորի (929-953) իշխանության օրոք[6]: Պետք է նկատել նաև, որ ճարտարապետական առումով Սբ. Աստվածածին եկեղեցին բավականին համեստ է և հատակագծային չափերով չորս անգամ փոքր Ամենափրկիչ

---

[1] «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի Քէօթուկը)», այսուհետ՝ «Յիշ.Սանահնոյ վանից», աշխատասիրությամբ Պ. Մուրադյանի, Սբ. Էջմիածին, 2007, էջ 67-68:
[2] Տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ.» ,էջ 60:
[3] Տե՛ս Ղաֆադարյան Կ., Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Ե., 1957, էջ 195:
[4] «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ.», էջ 60:
[5] Նույն տեղում, էջ 18, տե՛ս նաև Халпахчьян О., Санаин, М., 1973, с. 27.
[6] «Յիշատակարան Սանահնոյ վանից», էջ 53:Ղաֆադարյան Կ., նշվ.աշխ., էջ 15-17:

եկեղեցուց[1]: Ըստ այդմ՝ թյուր կլինի նրա կառուցումը վերագրել Աշոտ Գ Ողորմածին և Խոսրովանույշ թագուհուն, չնայած հրովարտակում ամբողջ վանքի կառուցումը վերագրվում է նրանց:

Արդ, ինչո՞ւ է Սմբատ Բ-ն Սանահնի ամբողջ վանքի կառուցումը վերագրում իր ծնողներին:

Անդրադառնալով այս հարցին՝ հետազոտողներից Տ. Մարությանը նշում է, որ այստեղ «Աստվածածնի» հիշատակումը ունի լայն ընդգրկում. նկատի է առնվում Սանահնի ամբողջ համալիրը[2]: Սակայն եթե վերը նշվել է, որ հրովարտակում Սմբատ Տիեզերակալը դիտարկում է Սբ. Աստվածածին[3] եկեղեցին՝ որպես վանքի առանձին կառույց՝ միաժամանակ հայտնելով, որ այն ոչ թե կառուցվել, այլ վերանորոգվել է իր հոր և մոր կողմից, ապա պետք է եզրակացնել, որ ամբողջ վանքի կառուցումը Աշոտ Գ Ողորմածին և Խոսրովանույշ թագուհուն վերագրելը պայմանավորված էր վերջիններիս կողմից վանքի ամենամեծ և գլխավոր եկեղեցու՝ Ամենափրկչի կառուցմամբ[4]: Ըստ այդմ՝ մեծ է հավանականությունը, որ Սմբատ Բ-ն Սբ. Աստվածածնի փոխարեն եպիսկոպոսանիստ է դարձրել Ամենափրկիչ եկեղեցին՝ եպիսկոպոսական աթոռը տեղափոխելով այստեղ:

Ինչպես վերը նշեցինք, Սմբատ Տիեզերակալն ընդարձակում է նորահաստատ թեմի հոգևոր իշխանության սահմանները՝ հստակորեն ուրվագծելով թեմի տարածքը: Ըստ հրովարտակի՝ նորահաստատ թեմը ներառում էր Տաշիրի Վերին և Ներքին հատվածները, որոնք գտնվում էին Բազումի լեռնաշղթայի «յայսկոյս եւ յայնկոյս». Վերին Տաշիրը՝ «Յայսկոյս Բազումը», ընդգրկում էր Նիգ գավառի հյուսիսային հատվածը՝ Բամբակիձորը*, և Վարաժնունիք գավառի հյուսիսային մասը՝ մինչև Ծաղկունյաց լեռները, իսկ Ներքին Տաշիրը՝ բացի Տաշրատափից՝ Ծոբոփոր գավառը, ինչպես նաև Մանգլեաց փոր գավառի հարավային մի հատված՝ հասնելով մինչև Սամշուլդե[5]:

Հարց է ծագում՝ ինչու է Սմբատ Տիեզերակալը վերահաստատում Սանահնի եպիսկոպոսարանի կարգավիճակը՝ շնորհելով նրան ավելի ընդարձակ վիճակ:

Ուսումնասիրողներից Ռ. Մաթևոսյանը կարծում է, որ հրովարտակը Գուրգեն (Կյուրիկե) Ա-ին (981-989) Տաշիր-Զորագետի կառավարիչ ճանաչելու և նրա իրավունքներն այստեղ հաստատելու փորձ էր[6]: Հետազոտողը նշում է, որ ընդունված կարգի համաձայն՝ նոր գահ բարձրացած Հայոց թագավորը պետք է ճանաչեր իր ստորականների իրավունքը, և ինչպես ինքն է ենթադրում Սմբատ Բ-ի հրովարտակը Տաշիրում Գուրգենի իշխանության «ճանաչման վավերագիրն» է[7]: Հարկ է նշել, որ հեղինակի պնդումը հիմնված է միայն այն տեսական, վերացական դրույթի վրա, որ ավատատիրական հասարակարգում օրինաչափ երևույթ էր թագավորի կողմից իր ենթակա իշխանությունների ճանաչումը: Այդպիսի տեսակետը արդարացված չի կարելի համարել թեկուզև այն պատճառով, որ հրովարտակում խոսք անգամ չկա Գուրգենի իշխանության կամ Տաշիրի անկախության ճանաչման մասին: Նշենք, որ Ռ. Մաթևոսյանի դիտարկումը, փաստորեն, նորություն չէ և ընդամենը Ղ. Մովսեսյանի ենթադրության «Սմբատը Տաշիրքի հոգեւոր իշխանութեան սահմանները ընդարձակած միջոցին, առանց տարակուսի կը գծեր մի եւ նոյն ժամանակ իւր եղբոր Գուրգէնի, իշխանութեան սահմանները, եւ այս առթիւ տեղի կունենար Տաշիրքի հրատարակութեան

---

[1] Տե՛ս Մարության Տ., Սանահնի Ամենափրկիչ եկեղեցու կառուցման ժամանակի հարցի շուրջ, «ՊԲՀ», 2001, 1, էջ 190-201:

[2] Նույն տեղում, էջ 198:

[3] Ղաֆադարյան Կ. նշվ. աշխ., էջ 16-17, Maksudian K.,A note on the monasteries founded during the reign of King Abas I Bagratuni, Revue des études arméniennes, n. 22, 1990, p. 203-215, Ghalpakhtchian O., Alpago-Novello A., Sanahin, Milan, 1970, p.4.

[4] Այս մասին մանրամասն տե՛ս Ղաֆադարյան Կ., նշվ. աշխ., էջ 18-28:

* Նույնանում է Փամբակի հովիտի հետ:

[5] Տե՛ս «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», էջ 37:

[6] Տե՛ս Մաթևոսյան Ռ., նշվ.աշխ., էջ 88:

[7] Նույն տեղում, էջ 92:

հանդէսը Սանահնի մէջ, ուր գացած էր Հայոց թագաւորը այս նպատակաւ»[1] վերարծարծումն է:

Հայտնի է, որ X դարի ընթացքում Բագրատունյաց Հայաստանում, բացի Տաշիր-Ձորագետի թագավորությունից, ձևավորվել էին ենթակա այլ թագավորություններ, որոնց անկախության ճանաչումը առհասարակ չի զուգակցվել առանձին թեմ ունենալու կամ հիմնադրելու հետ: Օրինակ՝ Վանանդի իշխանությունը անկախ ճանաչելու համար ամենևին էլ հարկ չեղավ այստեղ հաստատել առանձին թեմ[2]: Հետևաբար Ռ. Մաթևոսյանի մոտեցումը, ըստ որի՝ թեմի հիմնադրումը կարելի է ընդունել որպես Գուրգենի իշխանությունը Տաշիրում ճանաչելու կամ Տաշիրը անկախ հռչակելու միջոց, այնքան էլ հիմնավոր չէ:

Ուսումնասիրողներից Ա. Շահնազարյանը նշում է, որ Գուրգեն Ա-ի վերակացության ժամանակ Տաշիր-Ձորագետ վարչական միավորն ավելի մեծ տարածք ուներ, քան նրա եղբոր՝ Սմբատ Բ-ի վերակացության օրոք, և հրովարտակի արձակումը բացատրում է Տաշիրի հոգևոր թեմի իրավասությունները Տաշիր-Ձորագետի բոլոր սահմանների վրա տարածելու՝ Սմբատ Բ-ի ցանկությամբ է[3]: Ուսումնասիրողը Սիմեոն կրոնավորի հիշատակարանի «ի թագաւորութեան Աշոտոյ եւ նորին որդւոյ Սմբատայ. քաջք եւ յաղթողք թագաւորաց Հայոց» տողից բխեցնում է, որ Սմբատ Բ-ն Տաշիրում եղել է վերակացու: Այս առումով տեղին է նշել, որ վերջերս հիմնարար ձևով ապացուցվել է Սիմեոնի հիշատակարանի համապատասխան տողում «եւ նորին որդւոյ Սմբատայ» արտահայտության հետագայում հավելված լինելը[4] :

Համաձայն Արտաշես Շահնազարյանի մյուս դիտարկման՝ Սմբատ Բ-ի հրովարտակում նշված «Տաշրաց երկրի» սահմանները համապատասխանում են Գուրգեն Ա-ի օրոք Տաշիր-Ձորագետի թագավորության սահմաններին: Սակայն չմոռանանք, որ Անանուն ժամանակագիրը), Վարդան Արևելցին և Մխիթար Այրիվանեցին իրենց աշխատություններում ճշգրիտ և մանրամասն չեն արձանագրում Գուրգեն Ա-ի օրոք Տաշիր-Ձորագետի թագավորության վարչական սահմանները, հետևաբար և հավաստի դիտարկումներ կատարելու մեր հնարավորությունները սահմանափակ են: Ըստ Անանունի «Թագաւորք վերջինք Բագրատունիք» ժամանակագրության՝ Գուրգեն Ա-ի օրոք Տաշիր-Ձորագետի թագավորության սահմաններն էին՝ «Գոգարացւոց կողմանս, ըսկսեալ ի Գագայ Խառայ մինչեւ ի դուռն Տփխեաց» [5], այսինքն՝ ձգվում էին պատմական Գուգարք աշխարհի Կողբոփոր և Ձորոփոր գավառներից դեպի հյուսիս՝ ընդհուպ մինչև Տփղիս: Այս առնչությամբ Վարդան պատմիչը հաղորդում է. «Սմբատ, որ Տիեզերակալ կոչեցաւ, սա զմեծանիստ պարիսպն Անւոյ շինեաց և զկաթուղիկէն հիմնարկէ՝ եւ կրտսեր եղբայրն ժառանգէ զՏաշիր Սեւորդուվքն Ձորոյգետին. եւ զԿայեն եւ զԿայծոն. զԽորխոռունիք՝ որ ի Խոռայ շինեցաւ, որ է Խոշոռնի եւ Խոռակերտ, և զԲազունիք ՝ որ է Բազկերտ ի գաւառն Տաշրայ. եւ այլ բերդք անուանիք եհաս Գուրգենայ, զոր Վիրք Սոմխէթ կոչեն: Եւ ի նմանէ սերեցան թագաւորքն Դաւիթ, Աբաս եւ Կիւրիկէ»[6]: Միքայել Հովհաննիսյանի ճշգրտմամբ թվարկված բերդերը տեղակայված են Գուգարք աշխարհի հետևյալ գավառներում՝ Կայենը կամ Կայանը՝ Ձորոփորում, Կայծոնը՝ Տաշիր-Ձորագետում, Խոժոռնին՝ Ծոբոփորում , և Բազկերտը՝ Տաշիրում[7]: Մխիթար Այրիվանեցին սահմանափակվում է միայն «Գուրգէն ի Վիրս և Սմբատ եղբայր նորա ի Հայս թագաւորեցին» հիշատակությամբ [8] : Քննարկվող հարցում որոշակի պարզաբանում մտցնելու համար հարկ ենք համարում մեջբերել Ստեփանոս Տարոնեցու հիշատակությունը, ըստ որի՝ Կյուրիկե Ա-ի որդին՝ Դավիթ Անհողինը (991-1050), «ունի զկողմանս

---

[1] Մովսեսյան Ղ., նշվ.աշխ., էջ 26:
[2] «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. 3, Ե., 1976, էջ 93-99:
[3] Տե՛ս Շահնազարյան Ա., նշվ.աշխ., էջ 224-225:
[4] Տե՛ս Եղիազարյան Ա., Գահաժառանգության խնդիրը Բագրատունյաց Հայաստանում և գահակցության վարկածը, «Էջմիածին», 2015, դեկտեմբեր, էջ 58-59:
[5] «Յիշատակարան Սանահնոյ վանից», էջ 59:
[6] «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 90:
[7] Հովհաննիսեան Մ., Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 533-588:
[8] «Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց», Մոսկվա, 1860, էջ 56:

Տաշրաց և զՎրաց դաշտի զՇամշուլտեայ մեծ քաղաքանիստ զդղեակն նիստ արքունական պատրաստեալ ինքեան՝ արագապէս տիրէ քաղաքին Դմանեաց, հնազանդեցուցանէ և զամիրայն Տփղեաց քաղաքաւն իւրով»[1]: Այսպիսով՝ պարզ է, որ Դավիթ հորից ժառանգություն է ստացել Շամշուլտեն, իսկ Դմանիսը Դավիթ կողմից միացվում է Տաշիր-Ձորագետի թագավորությանը: Հետաքրքրական է, որ հրապարակում եղած ոչ մի սկզբնաղբյուրում չի հիշատակվում Գուրգեն Ա-ի օրոք Դմանիսի Տաշիր-Ձորագետից անջատվելու և Դավիթ Անհողինի կողմից վերագրավվելու մասին:

Անրադառնալով Սմբատ Բ-ի հրովարտակի նպատակին՝ նկատենք, որ քննարկվող ժամանակաշրջանում Սանահնի վանքում հոգևորականության թիվը գնալով ավելի էր մեծանում՝ հասնելով 500-ի[2]: Հետևաբար մեծ է հավանականությունը, որ Սմբատ Բ-ի հրովարտակի նպատակն էր ապահովել Սանահնի վանքի՝ աճող միաբանության նյութական պահանջները, որպեսզի վերջինս դարձնի թագավորական իշխանության հենարաններից մեկը Հայաստանի հյուսիսային սահմաններում:

Այսպիսով՝ Սմբատ Բ-ի հրովարտակի քննությունը հնարավորություն է տալիս ճշգրտելու հետագայում (XIIդ.) վիրահայոց թեմի ձևավորման համար հիմք հանդիսացող հոգևոր իշխանության սահմանները :

Лилит Меликян, Из предыстории Армяно-грузинской епархии,-В статье рассматривается указ Смбат II Вседержителя, который закреплял за монастырем Санаин духовную юрисдикцию с более широкими границами. В указе содержится ценная информация для датировки отдельных сооружений Санаинского монастыря, а непосредственно о духовной юрисдикции монастыря. Исследования вышеупомянутого указа, дает вазможность определить основную территорию монастыря, на которой сформировалась *Грузинской епархия Армянской* Апостольской церкви.

Ключевые слова: Указ, духовная юрисдикция, *Грузинская епархия Армянской* Апостольской церкви, Монастырь Санаин

Lilit Melikyan, From the prehistory of Georgian- Armenian Diocese,-The article analizes Smbat II Tiezerakal`s edict (872), by which the spiritual jurisdiction of Sanahin monastery with broader borders was reaffirmed. Precious information has been kept in the edict regarding the dates of the separate constructions of Sanahin monastic complex as well as the territory occupied by the Monastery. The study of the above-mentioned decree gives the opportunity to determine the initial area and the monastic complex where the Georgian Armenian Diocese was formed.

The study of this decree reveals the fact of being a valuable source for elucidation of matters of Sanahin monastery and the prehistory of the Georgian Armenian diocese, it is of utmost importance.

Keywords: edict, spiritual jurisdiction, Georgian-Armenian Diocese, Sahanhin Monastery

[1] Ստեփանոս Տարոնեցի, Տիեզերական պատմութիւն, բնագիրը Գուրգէն Մանուկեանի, «Մատենագիրք Հայոց», ԺԵ. հատոր, Ժ դար, Գիրք Բ, Անթիլիաս, 2011, էջ 757:
[2] Ստեփանոս Տարոնեցի, էջ 75: